# ԿԱՐԵՆ ԱՍՐՅԱՆԸ ՇԱՏ ԼՈՒՐՋ Է ՏՐԱՄԱԴՐՎԱԾ

**Ինչպես գիտենք, Լաս Վեգասում կայանալիք աշխարհի առաջնությունում Հայաստանը ներկայացնող 3 շախմատիստներից մեկը միջազգային գրոսմայստեր Կարեն Ասրյանն է: Տարվա գլխավոր իրադարձության մրցավայր մեկնելուց առաջ, Կարենն իր ողջ ժամանակը հատկացնում է տնային մանրակրկիտ նախապատրաստությանը: Նրա հայրը՝ Արարատ Ասրյանը, որը գրոսմայստերի մշտական մարզիչն է, հարմար գտավ, որ Կարենը «Ֆուտբոլ +»-ին հարցազրույց տա միայն Լաս Վեգասից հետո: Իսկ հիմա Արարատն՝ ինքը, սիրահոժար համաձայնեց պատասխանել մեր հարցերին:**

**- Լաս Վեգասից առաջ վերջին մրցաշարը, որտեղ խաղացել է Կարենը, Լոզանում անցկացված 8 երիտասարդ շախմատիստների մրցաշարն էր: Ինչպե՞ս ես գնահատում նրա խաղն այդ մրցությունում:**

- Ես գոհ եմ Լոզանում Կարենի ցույց տված արդյունքից: Նախնական խաղերում նա հաղթեց Պելետիերին, Կասիմջանովին, ոչ-ոքի խաղաց Լեյտաոի հետ եւ 2,5 միավորով դարձավ իր ենթախմբի հաղթող: Պարզապես մրցաշարի մրցակարգն էր տարօրինակ, երբ եզրափակիչ խաղերում հնարավոր էր մեկ պարտությամբ դուրս մնալ հետագա պայքարից: Ստացվեց այնպես, որ հենց առաջին խաղում Կարենը պարտվեց նախնական խաղերում ամենաքիչ միավոր վաստակած (կես միավոր) Բաքրոյին եւ դուրս մնաց: Կարեւորն, իհարկե, մրցաշարի մթնոլորտն էր, որտեղ հանդես էին գալիս իսկապես ուժեղագույն երիտասարդ գրոսմայստերները:

**ԿԱՍԻՄՋԱՆՈՎ - ԱՍՐՅԱՆ**

**1. d4 d5 2. c4 e6 3. Ձc3 Ձf6 4. cd ed 5. Փg5 Փe7 6. e3 c6 7. Թc2 Ձbd7 8. Փd3 0-0 9. Ձf3 Նe8 10. 0-0 Ձf8 11. h3 g6 12. Փh6 Ձh5 13. Նab1 a5 14. a3 Ձg7 15. b4 ab 16. ab Փf5 17. Փ:g7 Փ:d3 18. Թ:d3 Ա:g7 19. b5 Փd6 20. Նb3 Ձd7 21. Նfb1 Նa7 22. g3 Ձf6 23. Աg2 Թa8 24. Ձe5 c5 25. b6 c4 26. Թd1 Նa5 27. Նb5**



**27...Թa6 28. g4 Ն:b5 29. Ձ:b5 Թ:b6 30. Ձc3 Թa5 31. g5 Փ:e5 32. de Ձe4 33. Ձb5 Թa2 34. Թe1 Ն:e5 35. h4 Նf5, սպիտակները հանձնվեցին:**



Լուսանկարը՝ ՍԱՄՎԵԼ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ

**Լաս Վեգասի մրցաշարի մասնակիցներ Կարեն Ասրյանն ու Վլադիմիր Հակոբյանը**

**- Մեկ տարի առաջ Կարենի վարկանիշը 2600 էր, որը եւ նրան իրավունք տվեց դառնալ աշխարհի առաջնության մասնակից: Այժմ նրա վարկանիշը 2575 է: Նա որտե՞ղ ունեցավ այս կորուստները:**

- Կարենի անհատական գործակիցը նվազեց Հայաստանի առաջնությունից եւ Էլիստայի օլիմպիական մրցաշարից հետո: Եթե հիշում եք, անցյալ տարի մեր երկրի առաջնությունը ժամկետներով համընկավ Ֆրանսիայում անցկացված ֆուտբոլի աշխարհի առաջնության հետ: Կարենը ֆուտբոլի մոլի սիրահար է եւ բաց չէր թողնում աշխարհի առաջնության ոչ մի խաղ: Բնականաբար, դրա հետեւանքները պիտի զգացվեին Հայաստանի առաջնությունում նրա ցույց տված խաղերի վրա:

**- Ինչպիսի՞ն են Կարենի հնարավորությունները Լաս Վեգասի առաջնությունում:**

- Կարենի առաջին մրցակիցն ուրուգվայցի Անդրես Ռոդրիգեսն է, որը 21-22 տարեկան երիտասարդ գրոսմայստեր է, անհատական վարկանիշը մոտ 2500: Կարենը մանրակրկիտ ուսումնասիրում է Ռոդրիգեսի եւ հնարավոր հաղթանակի դեպքում հաջորդ մրցակցի՝ անգլիացի Մեթյու Սադլերի պարտիաները: Ճիշտ է, մրցամարտերը բաղկացած են ընդամենը 2 պարտիաներից, բայց դե, յուրաքանչյուրի բախտը իր ձեռքում է: Չէ՞ որ խաղում ես մեկը սպիտակներով, մեկը՝ սեւերով: Համենայն դեպս, լասվեգասյան պայքարին Կարենը տրամադրված է շատ լրջորեն:

**«Ֆուտբոլ +»-ի կողմից մաղթենք, որ Կարենին նախ՝ շնորհավորի Ռոդրիգեսը, ապա՝ Սադլերը, հետո... մենք բոլորս:**